

ՖՐԱՆՍ-ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՁՎԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ֆրանս-հայկական փոխհարաբերությունների մասին խոսելիս, պետք է նկատի առնել լեզվական ազդեցությունների մեկ կողմը, այն է՝ լեզվական կապերը և առնչությունները: Լեզուների փոխհարաբերությունը, լեզվական փոխներթափանցման և լեզվական կապերի բաժանելով՝ Ա.Բարլեզիզյանը վերջիններիս մասին գրում է. «Այստեղ առկա է լեզուների փոխադարձ կամ միակողմանի հարստացում ու համալրում, որը չի հանգեցնում կառուցվածքային փոփոխությունների կամ խաչավորման: Լեզվական կապերի հետևանքներն առավել նշմարելի են բառային մակարդակում, ուր երևան են գալիս բառափոխառություններ, պատճենումներ, ինչպես նաև օտար միավորի խթանումով, բայց ազատ թարգմանությամբ ստեղծված նորակազմություններ: Բացառված չէ առանձին բառակազմական կաղապարի փոխանցումը»¹:

Ֆրանս-հայկական լեզվական առնչությունները՝ կախված արտալեզվական կապերի բնույթից, միշտ նույնը չեն եղել: Դրանք երբեմն բուռն վերելք են ապրել, երբեմն անկում, կապված սոցիալ-տնտեսական, կրոնական, քաղաքական, առևտրական բարենպաստ կամ անբարենպաստ պայմանների հետ: Ֆրանսերենից կատարված փոխառությունները հայերենում ունեցել են 3 բարձրակետ, ունեցել են աճման և նվազման միտում, այժմ դրսևորում են աճման միտում:

I բարձրակետ - կիլիկյան շրջանի փոխառություններ, 11-14-րդ դարերը շատ բարենպաստ էին փոխառությունների համար: Ֆրանսիայի և Հայաստանի միջև գործում էին կրոնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ կապեր, որոնք արտացոլված են հին ֆրանսերենից կատարված փոխառություններում: Սրանք ուղղակի, չմիջնորդավորված փոխառություններ են:

Այս շրջանի փոխառություններից են՝ *chastel* (դղյակ), *mareschal* (մարաջախտ), *maistre* (խորհրդական), *chaperon* (վեղար), *ofrende* (ժամուց) և այլն:

¹ Տե՛ս Ա.Բարլեզիզյան, Հայ-ֆրանսիականլեզվական առնչությունները XIXդարում, Ե., 1997, էջ 59:

II բարձրակետը 19-րդ դարի գրական արևմտահայերենի կատարած փոխառություններն են: Արտալեզվական կապերից այստեղ առաջին պլան են մղվում գրական-մշակութային կապերը: Ինչպես նշում է Յ.Աճառյանը, ի տարբերություն իտալացիների, «Ֆրանսիացիք չունենալով Արևելքի մեջ իրական գաղութներ, ուղղակի շփման մեջ չեն գտնված հայ ժողովրդի հասարակ խավերուն հետ. իրենց ազդեցությունը եղած է գրականութեան, գրական մարդոց միջոցով, հետևաբար ֆրանսիական ժողովրդական փոխառություններն ալ շատ մեծ թիվ չեն կազմեր և գրական փոխառություններն են, որ կը գերազանցեն զանոնք»:²

19-րդ դարը ֆրանս-հայկական լեզվական կապերի բարձրակետը կարելի է համարել և՛ որակական, և՛ քանակական առումով՝ այնուհետև (մախահաշիվ), պիֆթեք (տապակած միս), պըռոշ (կանացի կրծքագարդ), սաթեն (մետաքսեայ ազնիվ լաթեղեն մը), պուլվար (զբօսավայր, ճեմեփք) և այլն:³ Այս շրջանի փոխառությունները ևս ուղղակի, չմիջնորդավորված փոխառություններ են:

III բարձրակետը 20-րդ դարի (1920-1990) խորհրդային շրջանում արևելահայերենի ֆրանսերենից կատարված փոխառություններն են: Խորհրդրդային Միության կազմի մեջ մտնող Հայաստանի և Ֆրանսիայի միջև կապերն իրականանում էին Ռուսաստանի միջոցով, այդ իսկ պատճառով խորհրդային շրջանի փոխառություններն ունեն կարևոր առանձնահատկություն՝ դրանք միջնորդավորված փոխառություններ են և որպես միջնորդ լեզու հանդես է գալիս, բնականաբար, ռուսերենը: Նոր ձևավորվող սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները, արդյունաբերության, գյուղատնտեսության և զիտության զարգացումը հրամայական կերպով ստիպում էին փոխ առնել նոր առարկաներ, երևույթներ և հասկացություններ, անվանել բառամիավորներ, ինչը մեծ հաջողությամբ կատարվում էր: Խորհրդային շրջանի փոխառություններից են *suite* (սյուիտա), *fabrique* (ֆաբրիկա), *poudre* (պուդրա), *ferme* (ֆերմա), *bourse* (բորսա), *clinique* (կլինիկա), *masse* (մասսա) և այլն:

Ինչպես նշեցինք, այս փոխառությունների մեծ մասը միջնորդավորված փոխառություններ են, բայց պետք է նշել այս շրջանում ֆրանսերենի արևելահայերեն թափանցելու ևս մեկ ուղի՝ ֆրանսերեն → արևմտահայերեն →

² Յ.Աճառյան, Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ, Վիեննա 19, էջ 6:

³ Օրինակները բերված են ըստ Յ. Աճառյանի նշված աշխատության:

արևելահայերեն: Ֆրանսերեն փոխառությունների մի մասը արևելահայերեն կարող էր անցնել արևմտահայերենից, օրինակ՝ էտիկետ, ռեժիմ, ֆոն և այլն:

1990-ական թվականներից սկսած ֆրանս-հայկական լեզվական հարաբերությունները թևակոխել են զարգացման նոր փուլ: Թեև լեզվական առանձնահատկությունների բացահայտման տեսակետից 13 տարին շատ մեծ ժամկետ չէ, բայց նկատելի են որոշակի հետաքրքիր օրինաչափություններ ֆրանս-հայկական լեզվական հարաբերություններում:

1. հայ-ֆրանսիական լեզվական հարաբերությունները դարձել են ուղղակի և չմիջնորդավորված:

2. այդ հարաբերություններում տեղի է ունեցել հայերենի նշանակության և հեղինակության զգալի աճ:

3. լեզվական փոխազդեցության հիմնական ուղղությունը մնում է ֆրանսերեն → հայերենը, բայց որոշակի տեղաշարժ կա նաև հակառակ հայերեն → ֆրանսերեն ուղղության մեջ, որը հատկապես դրսևորվում է ֆրանսերեն թափանցած հայաբանությունների աճով:

4. ֆրանսերեն փոխառությունների մեջ ավելացել է հապավումների տեսակարար կշիռը՝ SPFA (բողոքական համերաշխություն Հայաստանի և Ֆրանսիայի միջև), MSF (Բժիշկներ առանց սահմանի), JPE (Երիտասարդությունը՝ Եվրոպային կողմ), Vifax (լեզվի ուսուցման նոր տեսալսողական մեթոդ՝ video+fax), օնց (հասարակական կազմակերպություն) և այլն:

5. շարունակվում են նաև ռուսերենի միջոցով կատարվող ֆրանսերեն փոխառությունները, որին ավելացել են նաև անգլերենի միջոցով հայերեն թափանցած ֆրանսերեն փոխառությունները:

6. արդի փուլը ֆրանս-հայկական լեզվական կապերի զարգացման տեսակետից բավականին խոստումնալից է: Ֆրանսերեն բառերն օտարաբանությունների և փոխառությունների ծևով թափանցում են հայերեն: Նշենք մի քանի ֆրանսերեն նորագույն փոխառություններ հայերենում՝ ժադոդ (օժանելիք) - j'adore, գլասե (պաղպաղակով սուրճ) - glace, միկրոտրոտուար (հեռուստատեսային հարցազրույցի տեսակ) - micro-trottoir, էքսպո (ցուցահանդես) - expo և այլն: